

ւանդաբար կը յիշատակուի թէ Տաճարականաց շէնքին մօտ, արեւելեան կողմը, քաղաքին պարիսպին մօտ կը գտնուէր Սիմէոն Ծերունիին տունը, ուր յաճախ հիւրասիրութեամբ կ'ընդունէր Ս. Կոյսը եւ կը խնամէր եւ կը կերակրէր զայն: Միեւնոյն կերպով վարուեցաւ այն գիշերը՝ երբ Տիրոջ ծնունդէն քառասուն օր վերջ, ան մանուկը և անոր մայրը Տաճարին մէջ ընդունեց իր բազուկներով և ներկայացուց Աստուծոյ, մարգարէաբար ըսելով թէ Ան է այս մանուկը որուն երկար տարիներէ ի վեր կը սպասէի եւ «արդարձակեալ զիս ի խաղաղութիւն»: Եկեղեցիի փոխուած այս միեւնոյն տան մէջ թաղուած է Սիմէոն Ծերունին, ինչպէս յայտնի կ'ըլլայ իր տապանաքարէն: Այս եկեղեցիին նկուղին մէջ մինչեւ հիմակ կը պահուի Քրիստոսի փայտեայ որրանը զոր կը յարգեն մեծ պատւով (P. T. S. հատ. Ե. էջ 21-22):

Իսկ Յովհաննէս եպօ. Երուսաղէմացին Սիմէոն Ծերունիի մասին կը գրէ հետեւեալ աւանդութիւնը. «Սաչավանքին հարաւային կողմը կը գտնուի աւերեալ աշտարակ մը (պուրճ), որուն համար կ'ըսուի թէ Սիմէոն Ծերունիին տունն է: Մեր Փրկչին քառասնօրեայ ի Տաճարն ընծայման առթիւ, Ս. Հոգիին հրամանաւ, մէկ ակնթարթի մէջ Սիմէոն Ծերունիին Սողոմոնեան Տաճարին մէջ գտնուեցաւ» (Հան. էջ 295):

4. Սիմեոն Ծերունիի մասին աւանդութիւններ. — Կը պատմուի թէ գրեթէ երկու հարիւր ութսուն տարի առաջ, Պտղոմէոս կը փափաքէր երրայեցերէն Ս. Գիրքը յունարէնի թարգմանել՝ որպէսզի զայն զետեղէր Աղեքսանդրիայի հռչակաւոր մատենադարանին մէջ: Ան անմիջապէս պատգամ զրկեց Հրէից քահա-